Արձանագրություն թիվ 1

2018թվականի սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 1-ին Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:

2.Տարրական դասարաններում <<Տաք սնունդ>> ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու և ծնողական ներդրումների հարցը:

3.Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասվար Հ. Մարգսյանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ. ծանոթացավ ծնողների հետ և ասաց, որ չորս տարի համագործակցելու են իրար հետ և շատ է ցանկանում, որ այդ համագործակցությունն ընթանա փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում: Ընկեր Մարգսյանը նշեց նաև, որ ձևավորելու են ծնողական խորհուրդ՝նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1 Եղիազարյան Սեդա

2.Գրեյան Մարգարիտ

3.Գաբրիելյան Մարիամ

4.Շահինյան Անի

5.Ազատյան Տաթևիկ

Ակտիվ քվեարկության արդյունքում ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Ազատյան Տաթևիկը:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասվարին:

2.Լսեցին.- Տարրական դասարաններում <<Տաք սնունդ>> ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու և ծնողական ներդրումներ կատարելու հարցը:

Դասվար Հ. Մարգսյանը ծնողներին ծանոթացրեց <<Տաք սնունդ>> ծրագրին: Նա ասաց, թե ինչ անդամթերքներ են ընդգրկված այդ ծրագրի շրջանակներում, որը բավարար չէ այն ռացիոնալ կազմակերպելու համար: Անհրաժեշտ է նաև ծնողական աջակցություն և ծնողական ներդրումներ: Ուսուցչուհին ասաց, որ այդ ներդրումները լինելու են 100-300 դրամի սահմաններում: Գումարները տնօրինելու են յուրաքանչյուր դասարանից ընտրված ծնողները՝

Որոշեցին.- Հավաքել 300-ական դրամ և այդ աշխատանքը հանձնարարել ծնողական խորհրդի անդամ Մարիամ Գաբրիելյանին:

Լսեցին.-Ընթացիկ հարցեր/դասացուցակ, ռեժիմ/:

Հ. Սարգսյանը ծանոթացրեց դպրոցական ռեժիմին: Ծնողներին ներկայացրեց իրենց երեխաների շաբաթական ծանրաբեռնվածությանը/20 ժամ/, 1-ին դասարանում ուսումնասիրվող առարկաներին և դասավանդող ուսուցիչներին:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները, հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին, մշտական կապ պահպանել դասվարի և դպրոցի հետ

Ժողովի նախագահ՝ Տաթևիկ Ազատյան

Քարտուղար՝ Անի Շահինյան